

Ռամկավարների գործունեությունը Սիրիայում 1914-1920-ական թթ.

Սարգսյան Սուրեն Թ.

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*

<https://orcid.org/0009-0005-6171-9021>

sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477); EDN: FBBZSX

DOI: 10.58587/18292437-2024.3-26

Հանգուցաբառեր՝ երիտթուրքեր, կուսակցություն, ռամկավար, եղեռն, սիրիահայեր, հայապահպանություն, ազգանպաստ գործունեություն

Деятельность рамкаваров в Сирии 1914-1920-е годы

Саргсян Сурен Т.

д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. Со второй половины 1980 годов жизнь в Армении стала очень политизированной, и традиционные армянские партии начали в нем играть важную роль. Вот почему возникла необходимость в новом освещении их истории. История Армянской Конституционной рамкавар партии-одну из составляющих партии Рамкавар-Азатакан, во время геноцида армян и последовавших за ним лет, почти не изучены.

Чтобы завершить вопрос, подробно изложен геополитическая ситуация в конце XIX и в начало XX веков, политика младотурок в отношении армян, Первой мировой войны, трагедия Геноцида армян и последовавших за ним лет. На этой основе и история деятельности сирийских армян и рамкаваров этой стране.

Ключевые слова: политика, Армянский вопрос, младотурки, геноцид, партия, сирийские армяне, Рамкавар, сохранение армянства, национальный подъем

The activities of the Ramkavars in Syria in the 1914-1920s.

Sargsyan Suren T.

Doctor of Sciences in History, professor, Leading Researcher, NAS RA Institute of History (Yerevan, RA)

Abstract. The 1980s. since the second half, life in Armenia has become highly politicized and the traditional Armenian parties began to play an important role. That's why there was a need for new coverage of their story. Of the components forming the Ramkavar-Azatakan party (PRA) The history of the genocide of the Armenian Constitutional Court and the years that followed it has hardly been studied.

To complete the question, the following has been presented in detail the nineteenth century. the end and the XX century. the beginning of the geopolitical situation, the policy of the Young Turks towards the Armenians, First World War, The tragedy of the Armenian Genocide and the years that followed, experienced by Armenians. This is the basis for the history of the pro-Armenian activities of Syrian Armenians and Ramkavars in this country.

Keywords: politics, Armenian issue, Young Turks, genocide, party, Syrian Armenians, Ramkavar, preservation of Armenians, national rise

Ներածական

XX դարի վերջին քառորդից սկսած օրըստօրե ծավալվող հայ ազգային-ազատագրական շարժման արմատները սնվում ու դրսևորվում էին նախ և առաջ գաղափարախոսական ճակատում: Հայաստանի ու հայ ժողովրդի ապագայի մասին ծնվում էին նոր թեզեր և դրանց իրականացման համար առաջադրվում նոր մոտեցումներ: Խիստ գաղտնի կազմավորվում էին ազատագրական խմբակներ և նույնիսկ նոր կուսակցություններ (Ազգային միացյալ, Ինքնորոշում և այլն): Խորհրդային հատուկ ծառայություններն ակնդետ հետևում ու բոլոր հնարավոր միջոցներով ոչնչացնում էին այդ նորաստեղծ կառույցները: Այդ լարված ու աստիճանաբար ավելի քաղաքականացող մթնոլորտում Սփյուռքում ու Խորհրդային

Հայաստանում աննախադեպ սկսեցին կարևորվել հայ ավանդական՝ Դաշնակցություն, Հնչակյան և Ռամկավար կուսակցությունները: Այսինքն՝ կուսակցությունները դարձան ամբողջովին քաղաքականացած կյանքի հիմնական դերակատարները: Այդ կուսակցականացման գործընթացն այժմ էլ է գտնվում ամենաբարձր մակարդակում: Հետևաբար դրանց ծագումնաբանությունը, գաղափարական արմատներն ու էությունը խորությամբ ուսումնասիրելը ոչ միայն անհրաժեշտ է, այլև խիստ կարևոր: Քանզի հասարակությունները որքան էլ փոփոխվեն, իրենց բոլոր ենթաշերտերով հանդերձ, բաղկացած են երեք հիմնական՝ իշխող-պահպանողական, ընչազուրկ-հեղափոխական և դրանց արանքում լողացող միջին խավերից: Այս առումով էլ կարևոր է նորովի ուսումնասիրել հայ

իրականությունում գործած կուսակցությունների ամբողջական պատմությունը, լուսաբանել նրանց դավանած արժեքները և գաղափարախոսությունը:

Կուսակցության գաղափարախոսությունն ու վարած քաղաքականությունը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նրա ձևավորման և ժամանակի ընթացքում ունեցած փոփոխությունների հակիրճ նկարագիրը: Հայ Ռամկավար կուսակցության արմատները սնվում են առաջին և միակ հայրենածին Արմենական կազմակերպության գաղափարական անդաստանում: 1908 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած «հեղափոխության» խաբկանք երիտթուրքական հեղաշրջման արդյունքում և ազդեցությամբ Արմենականների և Հնչակյան կուսակցությունից զատված Վերակազմյալ Հնչակյանների միաձուլումից 1908 թ. հոկտեմբերի 31-ին Եզիպտոսում ստեղծվեց Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունը (ՀՍՌԿ)¹: Կուսակցությունը Թիֆլիսում հրատարակել է «Վան-Տոսպ», իսկ 1919 թ. Երևանում՝ «Հայաստանի ձայնը» թերթերը²: ՀՍՌԿ-ն հռչակեց Օսմանյան սահմանադրությամբ հեղափոխական գործունեության շրջանի ավարտը և հայտարարեց, որ իր նպատակն է, մերժելով որևէ անջատողական մտայնություն, Թուրքիայում «վերականգնված» սահմանադրության էլ ավելի դեմոկրատացումը, երկրի ամբողջականության և անկախության պահպանման պայմաններում հայության ազգային ինքնության հետագա զարգացումը: ՀՍՌԿ-ի ծրագրում նշվում էր, որ այն հանդիսանում է հայկական ազգային կուսակցություն, որն, անկախ կրոնական և դասակարգային պատկանելությունից, միավորում է ազգի բոլոր գիտակից և կենսունակ ուժերը: Կուսակցությունը որդեգրել էր «աշխատանքի, դրամագլխի և տաղանդի կամավոր ընկերակցության» սկզբունքը: Ազգային հարցում հույս դնելով օսմանյան սահմանադրության վրա՝ հրաժարվում էր Հայաստանի անկախության գաղափարից և պատրաստ էր փոխզիջման գնալ երիտթուրքերի հետ: Կազմակերպչորեն ՀՍՌԿ-ն բաղկացած էր Կենտրոնական ու տեղական ակումբներից և օթյակներից: Աշխարհագրական դիրքով իրար մոտ ակումբները միանալով կազմում էին շրջանակներ 4, էջ 14-15; 30, էջեր 68-69]:

ՀՍՌԿ-ն ժողովրդի մեջ տարածեց ժողովրդավարական սկզբունքները: Չնայած

ազատությունների և այլ ամպագորգոռ խոստումներին, ներքաղաքական խմորումները և նորաստեղծ կառավարության պահվածքը ցույց տվեցին, որ Թուրքիայում ոչինչ չէր փոխվել՝ թուրքը նույն ցեղասպանն էր մնացել: Իրականում էլ, սահմանադրության պատրանքը շատ շուտ ցրվեց և հեղափոխական թմբիրից արագ սթափված ռամկավարները 1910 թ. կուսակցության Սահմանադրական եզրը գործնականում չէր օգտագործվում [19; 20], քանզի հստակ դարձավ նաև, որ կուսակցության որդեգրած ծրագիրն այլևս ժամանակավրեպ է: Ավելին, 1920 թ. սեպտեմբերին Պոլսում հրավիրված ՀՍՌԿ Գ Ընդհանուր պատգամավորական ժողովի ընդունած ծրագրի առաջին թեզն էր «Կուսակցութեան անունն է. Հայ Ռամկավար Կուսակցութիւն»:

Նորաստեղծ կուսակցությունը ձեռնամուխ եղավ ամրապնդվելու և երկրի տարբեր մասերում ինչպես հին կառույցները նորոգելու, այնպես էլ նորերն ստեղծելու գործին: Կուսակցության կյանքում շրջադարձային եղան 1911 թ. հուլիսին առաջին և 1913 թ. հուլիսին Կ. Պոլսում տեղի ունեցած ընդհանուր պատգամավորական ժողովները: Դրանցում նկատի առնելով Իթթի-հատի հակահայկական քաղաքականությունը, որոշվում է. «ամեն հնարաւոր միջոցներ ձեռք առնել ներքին ինքնապաշտպանութեան պէտքին համար» [4; էջ 13; 33, էջ 67]: Այսինքն, ի տարբերություն այլ քաղաքական ուժերի, արևմտահայ իրականության ծնունդ ռամկավարները, բավականին արագ ըմբռնելով երիտթուրքերի իրական էությունն ու հայատյաց նպատակները, հայ ժողովրդին զգուշացնում էին մոտալուտ վտանգի մասին: Միայն, ցավոք, նրանք համեմատաբար թույլ էին, փոքրաթիվ և նրանց սթափության կոչերն այդպես էլ մնացին օդում կախված: Չվատվելով այդ ոչ ցանկալի իրավիճակից, ռամկավարներն օգտագործելով իրենց համեստ հնարավորությունները՝ փորձում էին կանխել, իսկ դրա անհնարինության դեպքում, ամեն ինչ անել ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Առաջ անցնելով նշենք, որ հենց ՀՍՌԿ-ն եղավ եղեռնի ժամանակ ամենարդյունավետ Վանի և Մուսա լեռան հերասամարտերի հիմնական կազմակերպիչն ու ղեկավարը: Կուսակցությունը նաև սատարեց Հայ բարեգործական ընդհանուր միության ու Հայ ազգային պատվիրակության ազգաշահ գործունեությանը: Պակաս կարևոր չէր նաև այն, որ Եղեռնից հետո կուսակցությունը լծվեց որբահավաք ազգանվեր աշխատանքներին և բոլոր միջոցներով սատարեց մեծ որբահավաք Ռուբեն Հեյրանին: Միաժամանակ արյունաքամ հայության մեջ իր մամուլի և այլ միջոցներով ձգտեց հասնել բաղձալի ազգային համերաշխության: Ի վերջո՝ Հայոց ցեղասպանությունից և

¹ Կուսակցության ստեղծման, ծրագրի և այլ մանրամասների մասին տե՛ս [30]:

² Այդ պարբերականների մասին մանրամասն տե՛ս [31]:

Հայաստանի Առաջին հանրապետության անկումից հետո էլ ՀՍՌԿ-ն լծվեց իրագործելու հայկական սփյուռքը կազմակերպելու հրամայականը [6]:

Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը սակայն ստիպեց ռամկավարներին վերանայելու իրենց քաղաքականությունը: Վերափոխումների արդյունքում 1919 թ. Հայաստանում գումարված համագումարն ընդունեց **Հայ Ռամկավար** կուսակցություն անվանումը: Իսկ Ամերիկայի շրջանակը հիմնում է Ազգային Ռամկավարական կուսակցությունը [4, էջ 47]: Նմանատիպ շարժընթաց տեղի էր ունենում նաև Վերակազմյալ Հնչակյան կուսակցության մեջ: Կուսակցության Ամերիկայի հատվածը 1918 թ. իրեն անվանում է **Հայ Ազատական** կուսակցություն [4, էջ 47]: Այսինքն, ձևավորվում էր ապագա ՌԱԿ-ի քաղաքական հավատամքը՝ հայության ֆիզիկական գոյապահպանություն հայրենիքում և սփյուռքում, անկախ հայրենիքում տիրող վարչակարգի գույնից ու գաղափարախոսությունից:

1919 թ. հունիսի 5-ին Փարիզում մի շարք փարիզաբնակ նշանավոր մտավորականների նախաձեռնությամբ, տեղի ունեցավ հավաք: Այն արձանագրելով, որ ձուլման համար բանակցություններ են ընթանում ՀՍՌ, Վերակազմյալ և Հայ Ժողովրդական կուսակցությունների միջև, այդ գործին նպաստելու համար ստեղծում է Գործադիր մարմին՝ Հայ Ազգային Ազատական միություն անունով: Ի վերջո, 1921 թ. հոկտեմբերի 1-ին հայտարարվում է Ռամկավար և Ազատական կուսակցությունների միավորման և նոր՝ Ռամկավար Ազատական կուսակցության ստեղծման մասին [4, էջ 220]:

Հայկական հարցից ցեղասպանություն

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Օսմանյան կայսրությունը պարտվեց և դրան հաջորդած Ման Ստեֆանոյի հաշտության ու Բեռլինի վեհաժողովի որոշումներով գրեթե ողջ եվրոպական տիրույթները կորցրեց: Դրանից սարսափած սուլթանն Աբդուլ Համիդն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրեց կայսրության արևելյան տիրույթներն ամեն գնով պահպանելու վրա: Իսկ այդ տարածաշրջանի հիմնական բնակիչները տեղաբնիկ ազատատենչ հայերն էին, որոնց դեմ էլ ուղղվեցին թուրքական բռնատիրության բոլոր լծակները: Այս տրամաբանության և Ման Ստեֆանոյի հաշտության 16-րդ ու Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածներով Հայկական հարցի միջազգային դիվանագիտության խնդրո առարկա դառնալու արդյունքում թուրքական իշխանությունները ձեռնամուխ եղան հայկական տարրին իր բնօրրանից դուրս մղելու և ընդհուպ ֆիզիկապես ոչնչացնելու միջոցներով տարածաշրջանին լիակատար տեր դառնալու եղերական ծրագրի իրականացմանը:

Այդ հայակույլ քաղաքականությունը որդեգրեցին Աբդուլ Համիդից սկսած բոլոր թուրք կառավարիչները, այդ թվում՝ երիտթուրքերը, որոնց համար պատեհ առիթ եղավ Առաջին աշխարհամարտը. «*երբ լուսարձակի տակ կը բերենք Հայկական Հարցին տուեալ ժամանակահատուածի զարգացումներն իրենց գլխաւոր գիծերով*» [5, էջ XV], ապա ակնհայտ է դառնում, որ հենց Առաջին աշխարհամարտի «*սկզբնաւորութեան հայ ցեղին մաքրագործուը Փոքր Ասիայէն իր տարողութեամբ ամբողջական եղաւ: Կենթադրուի որ մէկ միլիոն եւ քառորդ հայեր ընդգրկուած էին /այս գործողութեան մէջ/ եւ անոնց կեւէն աւելի մահացաւ: Կայ ոչ մէկ տրամաբանական կասկած թէ այս ճնիրը ծրագրուած եւ գործադրուած էր քաղաքական պատճառներով: Պատեհույթիւնը ներկայացած էր թրքական հողը (?) մաքրելու թրքական փառասիրույթիւններուն ընդդիմացող քրիստոնէայ ցեղէն...» [34, էջ 428-433]:*

Սիրիայի վիճակը Հայոց եղեռնից առաջ

Սիրիայում հայեր են ապրել վաղնջական ժամանակներից: Այդ երկրում և դրան հարակից տարածաշրջանում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին զուգընթաց կտրուկ փոխվել է նաև հայերի թվաքանակը: Դեպի Սիրիա հայերի մեծ գաղթ է տեղի ունեցել դեռևս մ.թ.ա. 80-60-ական թթ. Տիգրան Մեծի օրոք, երբ Ասորիքի գզալի մասը ընդգրկվել էր հայկական տերության կազմում: Հայերի թիվը Սիրիայում մեծացել է նաև Հայաստանում Բագրատունիների թագավորության անկման (1064 թ.), սելջուկյան թուրքերի (1064-1220 թթ.) ասպատակությունների, մոնղոլ-թաթարական (1220-1468 թթ.) տիրապետության, ինչպես նաև Կիլիկյան հայկական պետության անկման (1375 թ.) հետևանքով: Հայերը նշված շրջանից ի վեր սկսել են բնակություն հաստատել Դամասկոսում, Հալեպում, Փայասում, Ալեքսանդրեթում և այլ վայրերում:

Սիրիահայ համայնքը մեծապես համարվել է հատկապես 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հրաշքով մազապուրծ եղած գաղթականներով: Սկզբնական շրջանում այստեղ հայ գաղթականները ապրում էին շատ ծանր պայմաններում՝ հիմնականում վրանային ճամբարներում և մտադրություն չունեին վերջնականորեն հաստատվել Սիրիայում, քանի որ այնտեղ մի շարք գործոններ՝ էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլն, ոչ ցանկալի և օտար միջավայր էր նրանց համար: Սակայն հետագայում նրանք աստիճանաբար հաշտվեցին Սիրիայում հաստատվելու իրականության հետ և խելացի օգտագործեցին այդ նույն գործոնները հայ տարագիրների էթնիկ և մշակութային ինքնության պահպանման համար: Համախմբվելով տեղացի հայերի հետ՝ աստիճանաբար սկսեցին ինքնակազմակերպվել որպես համայնք

և սկսեցին քաղաքական դիմագիծ դրսևորել: Այդ համաձուլված համայնքն աստիճանաբար վերանեց կազմակերպված ու կենսունակ համայնքի, որը ձգտում էր ամեն կերպ պահպանել ազգային ինքնությունը: Գործընթացում զգալի ներդրում ունեցավ Հայ առաքելական եկեղեցին, որը, իր բուն գործառույթներին զուգահեռ, մեծ դեր խաղաց տարագիրների, այդ թվում, հայ որբերի և կանանց հավաքագրման, նրանց օգնություն տրամադրելու գործում: Ակտիվ գործունեություն էին ծավալում նաև հայրենակցական, մշակութային և բարեգործական միություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև ազգային կուսակցությունները: Առաջ անցնելով նշենք, որ Սիրիայում հայերի սոցիալ-քաղաքական կյանքում նոր առաջընթաց սկսվեց 1924 թ. հունիսի 12-ին Ազգերի լիգայի կողմից նրանց տրամադրված ինքնության վկայագրերի և ապա նույն թվականի ամռանը Սիրիայի քաղաքացիություն ստանալուց հետո, երբ հայերին թույլատրվեց մասնակցել իշխանության մարմինների ընտրություններին:

Նկատենք, որ մինչեղեռնյան շրջանում՝ գտնվելով օսմանյան բռնակալության ներքո, սիրիահայերը գրեթե նույն չափով բաժանում էին արևմտահայության դառն ճակատագիրը և ենթարկվում էին սոցիալ-տնտեսական, քաղաքական ու ազգային բռնաճնշումների: Իրավագուրկ էին, կամայականությունների զոհ: Ցեղասպանության ընթացքում էլ իրենց մաշկի վրա զգացին կոտորածների արհավիրքներն ու կոտորածների սարսափները: Մեր քննո առարկա՝ եղեռնին անմիջապես հաջորդող բախտորոշ իրադարձություններով հագեցած ֆրանսիական մանդատի ժամանակաշրջանում (1918-1946թթ., երբ փաստորեն ստեղծվեց Սիրիական պետությունը), ցեղասպանությունից և Կիլիկիայի աղետից ճողոպրած բազմահազար հայեր ապաստանեցին Սիրիայում: Այստեղ, չնայած թշնամիների կողմից հայ-արաբական բարեկամության միջև սեպ խրելու բազմապիսի դավերին և հայ գաղթականների կյանքի դժնդակ պայմաններին, պատերազմից ու ցեղասպանությունից ստացած խորը վերքերը բուժելու համար նրանք ինքնակազմակերպվելու և կյանքի բնականոն հուն մտնելու ուղղությամբ մեծ ջանքեր գործադրեցին: Վերակազմեցին ոչ միայն նախկին ու նոր բնակավայրերը, այլև հիմնեցին իրենց թեմական, քաղաքական և մշակութային կառույցները: Թեև շատ դանդաղ, սակայն աստիճանաբար սկսեցին գործունեություն ծավալել նաև հայ ազգային կուսակցությունները, այդ թվում՝ ռամկավարները:

Սիրիահայ գաղթօջախի (հատկապես կրթամշակութային կյանքի ու մամուլի) պատմությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված [17; 21; 22; 23; 26; 27; 32]: Իսկ ինչ վերաբերում է

մեր քննո առարկա՝ ցեղասպանության և անմիջապես դրան հաջորդած ժամանակահատվածում հայ ազգային կուսակցությունների և, մասնավորապես ռամկավարների, գործունեությանը, ապա հարակից թեմաների մասին խոսելիս հրնթացս անդրադարձներից և մամուլում հրապարակված որոշ ժլատ հրապարակումներից բացի, գրեթե ոչինչ չի արված: Ազգային արխիվում եղած փոքրաթիվ նյութերի [2, գ. 790], որոշ տպագիր սկզբնաղբյուրներում [4; 5; 6], հուշագրություններում և մամուլում [50] եղած տեղեկությունների հիման վրա հայոց պատմության հենց այդ սպիտակ կետը լուսաբանելուն է կոչված սույն հոդվածը:

Սիրիան կամ «Բիլադ աշ-Շամր» մինչև Առաջին աշխարհամարտը գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ, որն աղետաբեր եղավ այդ երկրում բնակվող քրիստոնյա ժողովուրդների համար: Պատերազմից հետո՝ 1920 թ. ապրիլին երկարատև սակարկումներից հետո Անտանտի բարձրագույն խորհուրդը Սան-Ռեմոյում որոշեց Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատը հանձնել Ֆրանսիային: Միայն ավելի ուշ՝ 1946 թ. ապրիլի 17-ին Սիրիայի անկախության շնորհիվ: Այսինքն, Հայոց եղեռնի և անմիջապես դրան հաջորդած տարիներին, քաղաքական կյանքը կայացման և զարգացման տարբեր դրսևորումներ ունեցավ այդ երկրում: Նախ՝ Արևմուտքի աճող ազդեցության ներքո աստիճանաբար առաջացավ արաբական ազգայնականության գաղափարախոսությունը և ազգի ու հայրենիքի ընկալումը: Երկրորդ՝ դրան նպաստեց նաև երիտթուրքերի կողմից իրականացվող «թուրքացման» քաղաքականությունը, որն արաբների համար ակնհայտ դարձրեց Օսմանյան կայսրությունում «բարեփոխումների և հավասարության» գաղափարների ողջ սնանկությունն ու իրագործման անհնարիությունը: Սիրիացի որոշ քաղաքական գործիչներ սկսեցին բարձրաձայն խոսել անկախության և արաբական պետության ստեղծման անհրաժեշտության մասին [23, էջ 21]:

Այսուհանդերձ, սիրիացիների մեծամասնությունը ողջունեց 1908 թ. Երիտթուրքական հեղաշրջումը, քանի որ վերջիններս խորամանկ և նենգ քաղաքականություն էին որդեգրել կայսրությունում ապրող այլազգիների նկատմամբ: Սկզբում նրանք փորձեցին սիրաշահել արաբներին, քանի դեռ հույսեր կային իսլամիզմի կամ օսմանիզմի քաղաքականության իրականացման հնարավորության վերաբերյալ: Այնուհետև, որդեգրելով թուրքիզմը՝ երկրի արհեստական թուրքացման ծրագիրը, որպես իրենց ներքին քաղաքականության հիմնարար ուղղություն, երիտթուրքերն արդեն իսկ բացահայտ կերպով փորձեցին արաբներին ընդգրկել

թուրքական տարբեր կազմակերպությունների մեջ [37, էջ 41-43]: Ազգայնականությանը խոչնդոտում էին նաև սիրիաբնակ այն ազգերը, որոնք «դեռևս չէին մտածում «երկրային» կատեգորիայով. Նրանք իրենց սիրիացիներ չէին համարում, այլ՝ սուննիներ, ալավիներ, քրդեր, դրուզներ, հույներ, իսլամներ, հրեաներ և այլն» [23, էջ 22], իսկ երկրի առաջնորդները ղեկավարվում էին ոչ թե սիրիական ազգային, այլ համայնքային շահերով: Մեծ տերությունների «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը նույնպես խոչնդոտում էր միասնական ազգային գաղափարախոսության ձևավորմանը: 1918 թ. հոկտեմբերին զինադադարի արդյունքում թուրքական բանակի վերջին մնացորդները հեռացան Սիրիայից և այստեղ սկսվում է ֆրանսիական մանդատի ժամանակահատվածը [38, էջ 18]: Այնպես որ, ընդհուպ մինչև 1918 թ.՝ Օսմանյան կայսրության փլուզումը, սիրիական ազգայնական վերնախավը հավատարիմ մնաց օսմանիզմի գաղափարախոսությանը և միայն ծանր պայմանների թելադրմամբ ստիպված եղավ հաշտվելու օբյեկտիվ իրողությունների հետ: Ահա այսպիսին էր իրավիճակը, երբ եղեռնից հրաշքով փրկված քարավանների կիսաշունչ բեկորներն սկսեցին հանգրվանել սիրիական անապատներում:

Հայոց մեծ եղեռնը

1914-1918 թթ. Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության մյուս բռնազավթված նահանգների հայ բնակչության զանգվածային տեղահանությունն ու բնաջնջումը համարվում է Հայոց ցեղասպանություն, իսկ դրա ամենամեծ ալիքը՝ Հայոց Մեծ եղեռնը: Առաջին համաշխարհային պատերազմի առիթն օգտագործելով՝ այն կազմակերպեցին և իրականացրին Թուրքիան կառավարող երիտթուրքերը: Հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականությունը պայմանավորված էր մի շարք գործոններով, որոնց մեջ առաջատար նշանակություն ունեին պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունները: 1915 թ. տեղի ունեցած ոճրագործությունը, որի հետևանքով Օսմանյան կայսրությունում ավելի քան 1.5 մլն հայ է սպանվել, համարվում է XX դարի առաջին ցեղասպանությունը: Չնայած որ Թուրքիան ավանդաբար մերժում է ցեղասպանություն իրագործելու մեղադրանքները, սակայն Էրդողանը հայտարարում է, որ «Մեր պատմությունը մշտապես կերտել ենք ժխտելու, անտեսելու և երկրից քրիստոնյաներին վռնդելու հիման վրա»: Անվիճելի է նաև, որ Թուրքիայի հանրապետության գոյության հիմքերից մեկն էլ 1915 թ. Հայոց ցեղասպանությունն է: Այսօր Թուրքիայում ոմանք գտնում են, որ «1915 թ. Ոճրագործություն է կատարվել», իսկ ոմանք էլ՝ «ոչինչ չի եղել»: Թուրք հասարակության մեծա-

մասնությունը թեև ցավագին է ընդունում այդ հարցի վերաբերյալ քննադատությունները, սակայն մի շարք միջազգային կազմակերպություններ և շուրջ երեսուն երկրներ պետական մակարդակով ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: **Դրանք** են՝ Ուրուգվայը, Արգենտինան, Ավստրիան, Բելգիան, Բոլիվիան, Բրազիլիան, Կանադան, Չիլին, Կիպրոսը, Չեխիան, Դանիան, Գերմանիան, Հունաստանը, Լատվիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Պարագվայը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Ռուսաստանը, Սիրիան, Սլովակիան, Շվեդիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ն:

Հայոց մեծ եղեռնի մասին շատ է գրվել: Հիմնախնդրի վերաբերյալ հրատարակվել են մեծ թվով սկզբնաղբյուրներ [7; 8; 10; 11; 12; 13; 14] և ուսումնասիրություններ [16; 24; 39; 40; 41; 42; 43; 44; 45; 46; 47; 48; 49; 51]: Հայ ժողովրդի ամենացավոտ ու կորստաբեր այդ իրողության մասին գիտության տարբեր մեկնակետերից այսօր էլ հայրենի և օտարերկրյա ուսումնասիրողներն աշխատություններ են հեղինակում, թուրքերի կողմից իրականացված այդ ամենամարդկային երևույթի նորանոր ծայրեր բացահայտում: Այդ գործին արդեն լծվել են նաև ազգությամբ թուրք հետազոտողներ, որոնցից առանձնանում է հատկապես հայտնի ցեղասպանագետ Թաներ Աքչամը³, որը շեշտում է, թե հայերի դեմ գործողությունները կատարվել են մաթեմատիկական ճշգրիտ հաշվարկներով: Տեղահանության և հայրենագրվման իսկական նպատակը թալանն ու ոչնչացումն էր, բնաջնջման մի նոր եղանակ և, փաստորեն, մի ամբողջ ազգի մահավճիռ:

Կարծում ենք տեղին է նշել, որ Հայոց ցեղասպանության արյունալի իրողությունը դատապարտել են մեծ թվով օտարերկրյա գործիչներ: Այսպես՝ 1918 թ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն նշում է. «1915թ. սկիզբ առան այս Սարսափները որոնք իրենց հավասարը չունեն պատմության մեջ: Արդույ Համիդի ջարդերը դատարկ բան են թվում ժամանակակից թուրքերի իրականացրած կոտորածի համեմատությամբ»: Նորվեգացի գիտնական Ֆիտյոֆ Նանսենն էլ նշում է, որ արևմտահայերի բռնազաղթն այլ բան չէր քան քողարկված սպանդ: Չկա աշխարհում որևէ լեզու այնքան հարուստ և այնքան գունեղ, որով հնարավոր

³ Մինչև վերջերս առաջին և միակ թուրք պատմաբանն է, որ ճանաչում և բացահայտորեն քննարկում է **Հայոց ցեղասպանությունը**: Այդ մասին բազմաթիվ գրքերի և հոդվածների հեղինակ է և ազատ խոսել է Հայոց Ցեղասպանության մասին: Հեղինակ է 10 գրքերի, որոնցից վերջինը վերնագրված է «Ամոթալի արարք: Հայկական ցեղասպանությունը և թուրքական պատասխանավության խնդիրը»:

լինել նկարագրել նման սարսափները: Ֆրանսիացի գիտնական Ժան դը Մորգանն էլ արձանագրում է, որ թուրքերը շարունակում էին իրենց նախկին քաղաքականությունը՝ կանգ չառնելով այնպիսի վիթխարի ջարդերի առաջ, որպիսիք կատարել չէր հանդգնել նույնիսկ Լենկթեմուրը: Իսկ ռուս գրող Վալերի Բոյուսովը բացականչում է, թե ո՞վ կարող է նկարագրել այն զգացումները որոնք ճմլում են ականտեսի սիրտը, երբ նա խորհում է այս դժբապտ և հերոսական ազգի մասին, որն աշխարհը զարմացրել է իր խիզախությամբ և անվեհերությամբ, երբ դեռ երեկ Օսմանյան կայսրության ազգերից առավել կենսունակ ու առաջավորն էր, որն այսօր դառնում է սոսկ անցյալի հուշ: Փայեջ էլ Հուսեյն խոստովանում է, որ մարդկության պատմության մեջ հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր: Ռազմական անհրաժեշտությամբ պատճառաբանված այդ միջոցառումը միայն պատրվակ էր որպեսզի քողարկվեր դարի հանցագործությունը: Համանման տեսակետներ են հայտնել նաև այնպիսի նշանավոր մտավորականներ, ինչպիսիք էին **Յո. Լեփսիուսը, Ա. Վեգները, Կ. Լիբկնիցտը և այլք:**

Յավայի իրողություն է, որ ավելի քան մեկ դար հետո էլ հայ ժողովուրդը դեռևս լիովին չի հաղթահարել ցեղասպանվածի հոգեբանությունը: Սակայն քիչ չեն նաև այնպիսիք, որոնց համար գաղափարական միտքն այլ չափանիշներ է ընդունում՝ հայրենասիրություն, ազգասիրություն, ազատություն, արդարություն: Այդ տեսակի անհատականությունները երբեք բռնանալու եւ հարստահարելու ունակություններ չեն կարող ունենալ և նրանք էին, որ վտանգելով իրենց կյանքը, ելան ոտքի և գենքը ձեռքին սկսեցին Օսմանյան և քրդական հրոսակների դեմ պայքարել: Դրանք ֆիդայիներն ու կամավորներն էին, որոնց համար կարևոր չէր թե, որ բանակի ու զորքի դեմ էին կռվում: Նրանց նպատակը մեկն էր՝ ազատություն, նրանք հավատում էին սեփական ուժին ու հնարավորություններին և ապավինում էին իրենց այդ գաղափարին: Անչափ կարևոր է, որ այսօր էլ այդ ոգին ու կորովը իշխող լինեն մեզանում:

Սիրիան եղեռնի ժամանակ և դրանից հետո

1863 թ. մարտի 17-ին Ազգային սահմանադրությունը հաստատվեց Բարձր դռան կողմից: 1865 թ. Հալեպ հասավ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի շրջաբերական-հրահանգը համայնքային վարչակառավարման մարմինները սահմանադրության համաձայն վերակազմելու մասին: Տևական բանավեճերից հետո 1876 թ. փետրվարի 10-ին կայացած Հալեպի թեմի ազգային զավառական ժողովի ընտրություն-

ներում 24 աշխարհական և 4 եկեղեցականներ ընտրվեցին [21, էջ 85]:

Սիրիայում օսմանահպատակ քրիստոնյաները ենթարկվում էին ազգային ու քաղաքական ամենաբիրտ ճնշումների, զրկված էին ամենատարրական իրավունքներից, և անդադար ոտնահարվում էր նրանց մարդկային արժանապատվությունը: Սուլթան Աբդուլ Համիդ II-ի (1876-1909) գահակալության տարիներին կայսրությունում սկսվեց բռնությունների, հալածանքների և զանգվածային կոտորածների նոր ժամանակաշրջան, որը պատմության մեջ մտել է «գուլումի տարիներ» անունով: Դրան հպատակ ժողովուրդները պատասխանեցին ազգային-ազատագրական բուռն պայքարի ալիքով: Օգտվելով Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցը աճուրդի հանելու և եվրոպական տերությունների թողտվությունից, թուրք պետական գործիչ Քամիլ փաշան հայտարարեց. «...*պետական իրավունքը կպահանջե, որ յուրաքանչյուր կասկածելի տարր անհետ ընենք. Ուրեմն այդ հայ ազգը, որ ոչ գենք ունի, ոչ զինվոր և ոչ պաշտպան, վերացնելու, անհետ և աննիստ ընելու ենք*» [56, էջ 204-205]:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում պարտված Թուրքիան եվրոպական տիրույթներից մեծ քնակությամբ գաղթականների բնակեցրեց Սիրիայի հայաշատ վայրերում: Դրանք պատուհաս դարձան հատկապես Հալեպի նահանգի հայությանը: Մինչ այդ բարիդրացիական հարաբերություններում գտնվող քրդերը ևս առիթից օգտվելով սկսեցին վայրագություններ կատարել հայերի նկատմամբ, քանի որ թուրքական իշխանությունները շարունակաբար հայ-քրդական թշնամանք էր քարոզում: Համիդի գնդերի կազմակերպվելուց հետո հարստահարությունները նոր թափ ստացան: Թեև 1894 թ. թուրքական իշխանությունները ուժեղացրին ազգային ճնշումները Հալեպի նահանգում, սակայն, ի տարբերություն հայկական վիլայեթների, այստեղ դրանք զանգվածային ձերբակալություններից և արքայից այն կողմ չհասան: Իսկ արդեն 1894-1896 թթ. հայկական կոտորածների ասպարեզ դարձավ նաև Հալեպի նահանգը: Հատկապես նահանգի ներքին շրջանները, որտեղ, օրինակ՝ Բիրեջիկում հայերից ոչ մի շունչ «*չմնաց և ուլքեր չմորթոտվեցին կամ Եփրատ գետը չնետվեցին, հարկադրված էին մահանդակականություն ընդունել*» [39.1, սրբ, 111]:

XX սկզբին՝ 1908 թ. հուլիսի 3-ին տեղի ունեցավ երիտթուրքերի հեղաշրջումը և հուլիսի 24-ին սահմանադրությունը վերականգնվեց, հայտարարվ խոսքի, մամուլի ազատությունը, ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները և այլն: 1909 թ. Ադանայի կոտորածները մոզական ազդեցություն ունեցան և

նորի հանեցին նաև Հալեայի թուրքերին: Այստեղ 1909 թ. ապրիլին կոտորվեցին 368 հայեր և թալանվեցին հայերին պատկանող շատ խանութներ ու տներ [39.2, էջ 168]: Լավ էր, որ տեղի արաբ պաշտոնյաներն այնքան էլ փոթևախոտությամբ չէին կատարում երիտթուրքերի հակահայ հրամանները: Հակառակ դեպքում, կոտորածներին կույ կգնային ողջ սիրահայերը: Ընդհանուր առմամբ, մինչև առաջին աշխարհամարտը, Սիրիայի հայությունը համարյա միևնույն չափով բաժանում էր ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես և Կիլիկիայի հայության դառն ճակատագիրը՝ բարբարոսաբար կեղեքվում էին և կողոպտվում, ենթարկվում ազգային ու սոցիալական դաժան ճնշման:

Օգտվելով պատերազմի պատեհությունից, որ մեծ տերություններն զբաղված էին իրար բզկտելով, աշխարհամարտի տարիներին, թուրքական իշխանությունները ձեռնամուխ եղան հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման հրեշավոր ծրագրի իրականացմանը: Իթթիհատական վերնախավից Նազըմն ընդգծել էր. «Պատերազմի մեջ ենք, սակե հարմար առիթ չի գտնվիր, պետք է հայ ազգը արմատախիլ լլղայ, մեր հողին վրա հայ անհատ մը անգամ չմնա, հայ անուն մոռացվի, բնաջնջումը անհրաժեշտ է» [57]: Նրանք բանտերից հավաքագրելով քրեական հանցագործներին, **Բեհաեդդին Ճափրի** ղեկավարությամբ ստեղծեցին «Թեշվիլթ Մահտուսե» հրոսակախմբեր, որոնք գործնականում իրականացրին արևմտահայերի տեղահանությունն ու կոտորածները: Կառավարությունը նաև 1915 թ. հունվարին հրաման արձակեց թուրքական բանակի հայ զինվորներին զինաթափել և ոչնչացնել: Իհարկե, ոչ պատահականորեն, առաջին հարվածներն ուղղվեցին Չեյթունին և Վանին, որոնք հերոսաբար դիմադրեցին: Դա էլ պատրվակ դարձնելով, որ 1915 թ. ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը միայն Կ. Պոլսում ձերբակալվեն 235 անվանի հայ գործիչների, որոնց թվելով Անատոլիայի խորքերը, զագանաբար սպանեցին: 1915 թ. ապրիլին սկսվեց նաև արևելյան նահանգների՝ Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի և Դիարբեքի հայության տեղահանությունը:

Սիրիայի հայությունն ապրեց իր պատմության խոշորագույն ողբերգությունը՝ նրա մեծ մասը ոչնչացվեց⁴: 1914 թ. հոկտեմբերի 29-ին պատերազմի մեջ մտած Թուրքիան Սիրիայում ամբողջ քաղաքական իշխանությունը կենտրոնացվեց չորրորդ բանակի հրամանատար

Ջեմալ փաշայի ձեռքում: Նա դաժանաբար ճնշեց 1916 թ. արաբների զինված ապստամբությունը: 800 գործիչներ կախադան հանվեցին և տասնյակ հազարավոր արաբներ հայերի նման թշվեցին անապատ: Թուրքական ազգայնականությունը, միաձուլվելով պանթուրքիզմի համար մոլոր պայքարի հետ, երիտթուրքերի հայացքն ուղղեց Անդրկովկասի վրա, որը (և մինչև օրս) նրանց համար դառնում է թուրքական կենսական տարածության նախադուռը: Պանթուրքական նվաճումների ճանապարհին սակայն խոչնդոտ էր հայ ժողովուրդը [58, էջ 171]:

1915 թ. ապրիլին սկսվեց արևելյան՝ Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի և Դիարբեքի իսկ հուլիսի վերջերին՝ արևմտյան նահանգների հայության արքորը: Սիրիայի նահանգների հայերին արքորելու հրամանը ստացվել էր 1915 թ. սկզբներին, սակայն տարբեր պատճառներով այն հետաձգվել էր: Մասնավորապես Հալեայի նահանգապետ Ջելալ բեյի՝ հայերի նկատմամբ ունեցած բարյացկամության շնորհիվ: Հալեայի նահանգում արքորի առաջին զոհերը եղան Դեռթթ-Յոլի, Այնթապի, Բեյլանի, Բիթլիսի, Կաթմայի, Քեսապի և այլ վայրերի հայությունը: Հալեայ քաղաքն ու նրա շրջանները քարավանների գլխավոր հանգրվանն էին՝ անապատ թշվելուց առաջ: 1915-1916 թթ. ավելի քան 350 հազար հայեր հանգրվանել էին Հալեայում, ապա՝ 1915 թ. սեպտեմբերի 9-ի հրամանով թշվեցին անապատ, որտեղ ավազի վրա քաղցից ու ծարավից հյուծվում-մեռնում էին [39.2, էջ 422]: Իսկ հայերի հիմնական մասը կոտորվեց Դեյր-Էզ-Չորում: 1916 թ. վերջերին ցեղասպանությունը գործնականում ավարտված էր, Թալեաթն էլ պարծենում էր. «Երեք ամսվա ընթացքում ես ավելին արեցի հայկական հարցը լուծելու համար, քան Համիդը՝ երեսուն տարվա ընթացքում» [21, էջ 115]:

1918 թ. Մուդրոսի զինադադարով առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց: Մոտավոր հաշվումներով բնակչության թվաքանակի համեմատությամբ ամենշատ զոհեր տվել էր բազմաչարչար հայ ժողովուրդը: Պատերազմի ավարտին Սիրիայում վերացվեց թուրքական նվաճողների 400-ամյա տիրապետությունը, սակայն նրան փոխարինած մանդատային ռեժիմը ոչնչով չէր համապատասխանում այդ երկրում բնակվող ժողովուրդների, այդ թվում նաև հայերի, ազգային անկախության երազանքներին: 1922 թ. հուլիսի 24-ին Ազգերի լիգայի խորհուրդը հաստատեց Սիրիայի և Լիբանանի մանդատի փաստաթուղթը, որով ճշտվում էին մանդատի իրավասություններն ու պարտավորությունները [15, էջեր 1013-1017]: Դրանում ասված էր, որ մանդատատեր պետությունները պարտավոր են որպես «քաղաքակրթական նվիրական պարտք» հոգալ իրենց

⁴ Օրինակ՝ Դեր Չորի մութասարրըֆ Սալիհ Չեքին, որը հեռակա կարգով մահվան է դատապարտվել, պատասխանատու է 200 հազար հայերի սպանության համար: Ի դեպ, նա Թուրքիայի կոմունիստական կուսակցության (ԹԿԿ) հիմնադիր անդամ էր և ԹԿԿ-ի և քեմալական շարժման միջնորդը: [60]:

խնամակալության հանձնված ժողովուրդների, որոնք ի վիճակի չեն մենակ ոտքի կանգնել այդ դժվարին պայմաններում, բարօրության և զարգացման մասին» [15, էջեր 374-375]: Ըստ էության այդ մանդատը, որով իշխանության հիմնական լծակները կենտրոնացան ֆրանսիայի ձեռքում, նոր և քողարկված գաղութատիրության ձև էր: Մակայն անկախության համար ազգային-ազատագրական պայքարը շարունակվեց և 1920 թ. մարտի 8-ին հայտարարվեց Սիրիայի միասնական ու անկախ պետության ստեղծման և Էմիր Ֆեյսալի թագավոր հռչակվելու մասին: Պատերազմի ավարտին Սիրիայի տարբեր քաղաքներում մնացել էին 70-75 հազար հայեր: Շատերն էլ՝ հիմնականում կանայք և երեխաներ, դեռ մնում էին անապատում:

Մուղրոսի զինադադարի 22-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր Անտանտին հանձնել բոլոր ռազմագերիներին, այդ թվում երկրի խորքը քշված հայերին: Դրանով հրաշքով կենդանի մնացած հայերը հնարավորություն ստացան վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը: Մղում տրվեց նաև որբահավաք գործին, որի համար Պողոս Նուբարը օգնության դիմեց և Սիրիայի գահակալ Հուսեյն իբն Ալին և նրա որդի Էմիր Ֆեյսալը սիրով ընդառաջեցին [25, էջ 230]: Արդեն հունիսի վերջին, «հայ կիներու և մանչերու հավաքման գործը բուն թափ էր ստացել» և ամեն օր Հայեայ էին ժամանում հայերի խմբեր [55]: Իսկ ավելի ուշ, անսալով ֆրանսիական շռայլ խոստումներին, հայերի մեծ քանակ՝ շուրջ 150 հազար, սկսեց հավաքվել Կիլիկիայում⁵:

Պայմանավորվածության համաձայն 1919 թ. սեպտեմբերի 15-ին բրիտանական զորքերը հեռացան Կիլիկիայից և նրանց տեղը գրավեցին ֆրանսիացիները: Նոյեմբերին Մ. Քեմալը ազգային պատերազմ սկսեց Կիլիկիայի ճակատից: Փետրվարի 11-ին պարտված ֆրանսիական զորքերը նահանջեցին Ադանա, իսկ մնացածը՝ գաղթեց Սիրիա [29, էջեր 161-162]: Վերջնարդյունքում 1921 թ. նոյեմբերի 25-ին «քնիկ ու գաղթական 45-50000 հայեր հեռացան Կիլիկիայէն» [3] և վերստին այիք առ այիք Սիրիա նետվեցին կիսամերկ ու հյուծված հայերի բազմություններ: Մակայն նրանց զգալի մասը, միառժամանակ Սիրիայում մնալուց հետո, արտագաղթեց: Ավելի ուշ, մեծ թվով շուրջ 100 հազար, հայեր ի վերջո հանգրվանեցին Սիրիայի հյուրընկալ հողում և աստիճանաբար սկսեցին վերընձյուղել հայեցի կյանքը: Ընդ որում ամենահայախոժ քաղաքը Հայեայն էր: 1918 թ. այնտեղ կային շուրջ 60, 1919-1920 թթ.՝ 35, 1921-1922 թթ.՝ 75, 1923-1924 թթ.՝ 48 հազար հայեր [59, էջ 235]: Նրանց մեծ մասն ապրում էր թշվառ,

օրվա հացի կարոտ վիճակում: Ոչ պակաս դժնդակ պայմաններում էին ապրում նաև Դամասկոսի, Ալեքսանդրեթի և մյուս քաղաքների հայ գաղթականները:

Ռ-ամկավարների գործունեությունը Սիրիայում

Սիրիայի տնտեսության հիմնական ճյուղ գյուղատնտեսությունը, որում զբաղված էր բնակչության 70 տոկոսը, պատերազմի ժամանակ ավերվել էր: Խիստ պակասել էր նաև անասունների գլխաքանակը: Անմխիթար վիճակում էր առևտուրը: Գաղթականության այիքը Սիրիա էր նետել ամենատարբեր զբաղմունքի տեր մարդկանց, որոնք ջանադրաբար սկսեցին զարգացնել երկրի տնտեսության տարբեր ճյուղերը: Միաժամանակ նրանք աստիճանաբար սկսեցին ներգավել ազգային-ժողովրդագրական շարժումների մեջ և պայքարել ինչպես երկրի անկախության, այնպես էլ սոցիալ տնտեսական վիճակի բարելավման համար: Հայության առաջավոր և համարձակ խավերն իրենց գործուն մասնակցությունն էին բերում հայ-արաբական մերձեցմանը խանգարող պատնեշների վերացմանը: Դարեր շարունակ պետական անկախությունից զրկված և մշտապես ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի ներքո գտնվող հայ ժողովուրդը առանձնահատուկ նշանակություն էր տալիս ազգային հարցի լուծմանը: Այդ հիմնախնդիրը լուծելու առաքելությամբ XIX դարի 80-ական թթ. իրար հետևից ասպարեզ իջած հայ ազգային կուսակցությունները փորձեցին ղեկավարել սկսված ազգային-ազատագրական շարժումը: Մակայն ուժերը խիստ անհավասար էին և այդ պայքարը եղերական վախճան ունեցավ: Արևմտյան Հայաստանը դատարկվեց, իսկ Հայկական հարցը թաղվեց Լոզանի կոնֆերանսի բավիղներում:

Այդ ողբերգական իրադարձությունների ողջ ընթացքում ռամկավարներն իրենց մաշկի վրա զգացին ինչպես ցեղասպանության, գաղթի, այնպես էլ օտարության մեջ դժվարագույն պայմաններում գոյատևելու սարսափները: Մակայն երբեք չլքեցին իրենց հայրենակիցներին, այլ, ընդհակառակը, առիթը ներկայանալու դեպքում սատարեցին ու զորավիզ եղան նրանց: Դա հատկապես դրսևորվեց Մուսա լեռան և Վանի հերոսական ինքնապաշտպանության ժամանակ: Վստահաբար կարելի է արձանագրել, որ այդ երկու ամենաարդյունավետ ինքնապաշտպանական կռիվների հաջողությունները պայմանավորված էին հենց ռամկավարների մեծ ներդրմամբ: Մակայն արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի արդյունքում ծնված ՌԱԿ-ի քաղաքական գործունեությունը չհանգեցրեց Հայկական հարցի լուծմանը: 1918 թ. մայիսյան հերոսամարտերն ու դրանց անմի-

⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս [53]:

ջական արդյունք Հայաստանի Հանրապետությունը (<<) հույսի նոր ալիք ծնեց հայոց մեջ: Անկախ բնակվելու վայրից ու սոցիալական ծանրագույն պայմաններից, հայ ժողովրդի հայացքն ուղղվեց դեպի նորանկախ ՀՀ: Դրա հետևանքով նաև ուշագրավ տեղաշարժեր գրանցվեցին ազգային կուսակցությունների, այդ թվում նաև նորաստեղծ Ռամկավար Ազատական կուսակցության քաղաքական վարքագրում: Նրանք անմիջապես հայտարարեցին իրենց պատրաստակամությունը նորաստեղծ հանրապետությանը ծառայելու գործում և համախմբեցին տեղացի և հիմնականում Վան-Վասպուրականից գաղթած իրենց կուսակիցներին և կոչ արեցին բոլորին՝ սատարել հայրենի իշխանություններին:

Խիստ կարևոր էր, որ նրանք այլևս չէին հավատում արևմտյան դիվանագիտությանը և արևմտահայ դատի լուծման երաշխիքը տեսնում էին հայրենի պետության զարգացման և ամրապնդման մեջ: Այս առումով հետաքրքիր է ռամկավար նշանավոր գործիչ Հրաչ Երվանդի այն միտքը, որ. «Մենք դեմ ենք համայնավար վարդապետությանը, բայց եւ կը տեսնինք, թե հայ ժողովուրդն իր քաղաքական սպահովությունը կպարտի պետականության գոյությանը» [54, 12 օգոստոսի]: Բացի այդ, նրանք Հայաստանի Հանրապետությունը համարում էին «միակ կռվանք», որից կառչելով հայ ժողովուրդը կարող է տիրանալ իր պատմական անժխտելի իրաւունքներուն» [54, 7 հուլիսի]: Ռամկավարները կոչ էին անում սփյուռքահայությանը «կարելի ամէն միջոցներով ուժ տալ ՀՀ-ին» [54, 28 հոկտեմբերի]:

Ռամկավար շրջանակները հենց սկզբից կանգնեցին նաև Ազգային պատվիրակության կողքին և բոլոր միջոցներով փորձում էին օգտակար լինել նրա ազգաշահ գործունեությանը: Սկզբնական շրջանում ակտիվ մասնակցում էին հրաշքով փրկված և Սիրիայի հյուրընկալ հողում հայտնված հայության բեկորների համախմբմանը, ինչ որ կերպ նրանց սովից փրկելուն և որբահարությանը: Ռամկավարները նաև տեղեկություններ էին հավաքում և ուղարկում Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին՝ դրանք ի հարկին օգտագործելու համար: Այսպես, ՀՌԿ Հայկալի ակումբը 1920 թ. փետրվարի 26-ի թվակիր հատուկ գրությամբ Պ. Նուբարին տեղեկացնում էր իրենց գործունեության և տեղի հայության կացության մասին. «Հայ Ռամկավար Կուսակցության Հայկալի Ակումբս, որ զինադադարէն յետոյ գրեթէ տարի մը ամբողջ Կիլիկիոյ և Սուրիոյ շրջանին մէջ Կեդր. Ակումբի դերը կատարեց ու նախաձեռնարկն եղաւ ներկայիս գոյութիւն ունեցող քոյր ակումբներու կազմութեան, որով և ռամկավար գաղափարներու շուտափոյթ տարածման, ներկայ քախտորոջ

վայրկեաններուն, իրեն համար պարտականութիւն կը համարէ ներիակ տեղեկագիր ներկայացնելու, խորհելով, որ Պատուիրակութիւնը անոր մէջ օգտակար ծանօթութիւն կրնայ գտնել: Այս առիթով Ակումբս կուգայ յայտնել իր շրջանակի բոլոր Ռամկավար ընկերներուն և նոյնպէս Սուրիաքնակ հայութեան խորին յարգանքն ու անայլալ փառահովութիւնը՝ Ազգ. Պատուիրակութեան և անոր Վսեմաշուք պետին, անոր կատարած այնքան ազգօգուտ դերին ու գործունէութեան համար, ու հաստատ հաւատք ունի, թէ հայու դարաւոր և օրինաւոր բաղձանքներուն իրականացման համար այդ գործունէութիւնը պիտի պակտիւն առաւելապէս արդար ու կատարեալ յաջողութեամբ մը» [2, գ. 790, թ. 1, բնագիր, ձեռագիր]:

Մեկ այլ փաստաթղթում էլ Հայկալի ակումբը Ազգային պատվիրակությանը հասցեագրված տեղեկագրով մանրամասն ներկայացնում է Հայկալի և շրջակայքի հայության ընդհանուր վիճակի մասին: Նշվում է, որ Հայկալում «Զինադադարին տեղս կը գտնուէին (50.000) տարագիրներ, որոնք հետզհետէ առաքուած են Կիլիկիա⁶, իսկ այժմ հոս կան (8000) տարագիր և (4000) տեղացի հայեր» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]:

Խիստ արժեքավոր այդ տեղեկագրում խոսվում է նաև տեղում գործող վարժարանների, միությունների, կուսակցությունների և առաջնորդարանի մասին: Այսպես. «...Պատուելի Ահարոն Ծիրանեանի տնօրինութեան ներքև կայ Հայկական Որբանոցը, ուր կը խնամուին (1200) հայ որբեր, իսկ Ֆրանսական իշխանութեան հովանաւորութեան ներքև գտնուող «Orphelinat Francous»-ին մէջ ևս կը հոգացուին հայ որբեր: Անոնցմէ գատ Ազգային վարժարանը ունի (800), Հայկազնեան վարժարանը (250) և Հայ Կաթոլիկ վարժարանը (700) աշակերտներ:

Քաղաքիս հայութիւնը ունի և Հ.Բ.Ը. Միութիւնը, Ազգ. Միութիւնը, Հայ Կարմիր Խաչը, Հայ Որբահաւաք Միութիւնը և Միջգաւառային Միութիւնը, որոնք իւրաքանչիւրը, իր կարգին, կ'աշխատի լրացնել իր պարտականութիւնը ազգային վերաշինութեան գործին մէջ: Հ.Բ.Ը. Միութիւնը վերջերս հաստատեց Ապաստանարան-Աշխատանոց մը՝ անսպաստէն հաւաքուած որբ ու այրիներու գործ և սպրուստ հայթայթելու համար:

...Տեղոյս մէջ իրենց ուրոյն գոյութիւնը պահող Հայ Ռամկավար, Հ.Յ.Դ. և Հնչակյան կուսակցութիւնները կազմած են Միջկուսակցային Մարմին մը, համերաշխարար գործելու համար ազգային զանազան խնդիրներու առջև: Ուրախ ենք հաստատելու, թէ տեղոյս հայութեան ընդհանուր համերաշխութիւնը չէ խանգարուած ոչ

⁶ Կիլիկիայում այդ ժամանակահատվածում ռամկավարների ծավալած գործունեության մասին մանրամասն տե՛ս [52]:

մէկ առիթով» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]:

Փաստաթղթում հատուկ անդրադարձ կա նաև հայ-արաբական հարաբերություններին: Շեշտվում է, որ դրանք «ներկայիս լաւ վիճակ մը կը ներկայացնեն: Սոյն համերաշխութեան տնականացման համար կազմուած է խառն գօմիթէ մը, որուն նախաձեռնութեամբ սարքուեցան փոխադարձ թէյասեղաններ: Վերջին շարքներս արաբ կառավարութեան կողմէ պաշտօնական յայտարարութիւն մը քաղաքին մահմետական և ոչ-մահմետական հասարակութեանց 1310-[13]16 ծնունդ ունեցող երիտասարդները զինուորագրութեան կը հրաւիրէր: Այս պարագան հայերուս համար մանաւանդ ոչ-բաղձալի ըլլալուն, դիմումներ կատարուեցան, որպէսզի գտնէ հայ երիտասարդները զինուորագրութենէ զերծ կացուցուին: Արդիւնքը որոշ չէ տակաւին» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]: Իսկ ինչ վերաբերում է առաջնորդարանի գործունեությանը, ապա ասվում է, որ «գնահատելի է իր գործունեութիւնը, տեղոյս հայութեան բազմապիսի պէտքերուն բաւարարութիւն տալու համար իր ըրած ճիշդըր անուրանալի են» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]:

Ինչ բերաբերում է Հայեպի շրջակայքին, ապա նշվում է, թէ որտեղ որքան հայեր կան և ինչ վիճակում են գտնվում: Այսպէս. Ուրֆայում «կը գտնուին (3500) հայաստանցի և (4000) տեղացի հայեր: Որքանոցներուն մէջ կը խնամուին (1606) հայ որբեր: (4500) հայ բնակարաններէն հագիւ (200)-ը անգղ. զին. իշխանութեան կողմէ վերաշինուած են, մինչ մնացեալ (4300)ը կը մնան բոլորովին աներակ: Անգ. զինուորներու քաշուելէն յետոյ ֆրանս. ոյժերը գրաւեցին քաղաքը ու սպառնացող վտանգը մասամբ հեռացած եղաւ այն ատեն: Իսկ վերջին շարքներու ընթացքին Ճարսպուտէ անդին երկայնուորի զիծը չէթէներու կողմէ խորտակուած ըլլալով, յարաբերութիւնները բոլորովին դադրած են Ուրֆայի հետ, որով չենք գիտեր այժմ թէ ինչ է Ուրֆայի քաջարի, բայց տարաբախտ հայութեան ներկայ կացութիւնը» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]: Ուրֆայից ոչ հեռու Կարմուն գյուղում էլ, որն «առաջ ունէր (9000) հայ բնակչութիւն, իսկ ներկայիս՝ միայն (888) հայեր, մեծամասամբ երիտասարդ: Մնացեալը դժբախտ զոհերը եղած են ՏէրՉօրի սահելի ջարդին»: Իսկ Սուրուճում, որ «գործական գազա մըն է, ունի (1500) թուրք և (170) հայ բնակչութիւն»: Տեղեկագրում խոսվում է նաև, որ այդ շրջանի թուրք-արաբական գյուղերում «տակաւին բռնօրէն առևանգուած կը մնան անելի քան (6000) հայ մանչ և աղջիկներ: Իսկ Պէտուի գիւղերուն մէջ, նոյնպէս իբր թուրք, բռնութեան տակ կ'սարին հազարաւոր հայ բեկորներ» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]: Փաստաթղթից տեղեկանում ենք նաև, որ «Պիրէճիկն ունի 1080,

Նիզիպ գիւղաքաղաքը՝ նախ ունէր 300, իսկ ներկայիս՝ 200, Էհնէշրնախ ունէր 800, իսկ այժմ ունի 300, Ճիպինը՝ ուր կ'սարէին 1000, իսկ հիմա կ'սարին 500 հայեր, իսկ աներակներու վրայ, մինչ 800է բաղկացած թուրք բնակչութիւնը կը վայելէ ամէն ճոխութիւն: Այս գիւղին և շրջականերուն մէջ ևս, թրքական հարեմներուն մէջ բանտարկուած կը մնան դեռ 1000-է անելի հայ աղջիկներ» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]:

Բացառիկ նշանակություն ունեցող ռամկավարների կազմած այս տեղեկագրում նշվում է նաև, որ «Այնթապը 1914-ին ունէր 35000 հայութիւն, իսկ ներկայումս ունի 20000: Որքանոցներուն մէջ կան 1200 որբեր» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]: «Քրիստում կան այժմ 5000 հայեր: Մարաշ քաղաքի մէջ կը գտնուին 30000 հայեր, որոնց 400-ը միայն դրսեցի են, մնացեալը տեղացիներ են: Չէյթունում և դրա շրջակայքում կան 5-6000 հայեր: Բուն Չէյթունը ունի 1200 վերապրող հայեր, մեծամասնութեամբ երիտասարդներ: Քաղաքը բոլորովին աներակ է, աներակ են նաև Տոնուզ և Տրնտրնագ» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]: Սակայն նաև ցավով ընդգծվում է, որ այս վերջին չորս քաղաքներում և շրջակայքում տիրող կացությունը խիստ սրտանմլի է և ողբալի: Որ Անգլիական զորքերի մեկնելուց և ֆրանսիացիների կողմից գրավելուց հետո Այնթապը շատ քիչ հանգիստ օրեր ունեցավ, որովհետև «Ազգիզէի, Սեբաստիոյ ու մանաւանդ Մարաշի կողմերէն փչող Մուլթաֆա Քէմալի հովերը, հոն ևս փոթորիկներու վերածուիլ սկսան, այնպէս որ, Այնթապի մէջ, վերջերս օր գերեկով սպանուած են 6-7 հայեր» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]: Ապա ավելացվում է, որ կացությունը «անելի ծանրակշիռ է Մարաշ քան այլուր», որտեղ ֆրանսիական ուժերը հենց սկզբից «թուրք վայրագութեան բաղիսեցան և յաճախ հատուածային յարձակումներու ենթարկուեցան» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]: Այդ ամենի հետևանքը եղավ այն, որ ֆրանսիացիներն ստիպված եղան ամբողջ քաղաքը ոմբակոծել, որի արդյունքում հայերն էլ մեծ կորուստներ ունեցան: Իսկ հետո, երբ ֆրանսիական զորքերը նահանջում են, «նահանջող ոյժերուն հետ քաղաքը ձգող 3000 հայութենէն հագիւ 1800 անձ, խիստ արգահատելի վիճակի մէջ հասած է Իսպահիէ.- Ատանա փոխադրուած, ճամբան մնացող 1200-ը փճացած են ձիւնին ու բուքին տակ»: Իսկ քաղաքից չմեկնողները «հաւանական է, որ թուրք չէթէներու վայրագութեանց ենթարկուեցան» [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]:

Չէյթունն ու շրջակայքն էլ, նշվում է փաստաթղթում, նույն ճգնաժամի պայմաններում են. «խեղճ Տրնտրնագը, իր Տէրէքէօյ և Քիշիֆի գիւղակներով անցեալ շարքներ, փնացուեցաւ թուրք չէթէներու կողմէ: Ահաւասիկ և

ամբողջ Կիլիկիոյ հայուքինը իր հոգևարքի վերջին վայրկեանները կ'սպրի... » [2, գ. 790, թթ. 2-6, բնագիր, ձեռագիր]:

Չնայած հայերի ոգևորությանն ու եռանդուն ջանքերին, չնայած որ «տեղացի բողոք քրիստոնեայ և իսլամ տարրերը կր փախաքին, որ այս երկիրը Ֆրանսաէն անկախանայ» [2, գ. 807, թթ. 1-3], ֆրանսիական իշխանությունները, փոխանակ նպաստավոր պայմաններ ստեղծել տեղի ժողովուրդների զարգացման համար, սեփական շահերն ամեն ինչից բարձր դասելով՝ երկդիմի քաղաքականություն էր վարում, որն առանց այդ էլ ոչնչացման եզրին հասած հայ զաղթականությանը մատնում էր հուսալքության: Սակայն ի տարբերություն Ֆրանսիայի կողմից քենալական Թուրքիային զիջած Կիլիկիայի, որտեղ չնայած կիլիկիահայությունը մի շարք տեղերում ցույց տված հերոսական դիմադրությանը, ևս մեկ անգամ ենթարկվեց ջարդերի ու հայրենազրկումի և այնտեղ «կրկին տիրող սարսափի թագավորությանը» [1, գ. 546, թթ. 8ա-8բ], սիրիահայերը մեծ ջանքերի գնով աստիճանաբար ուղղում էին իրենց մեջքը: Իսկ այդ դժվարագույն գործընթացին լավագույնս նպաստում ու սատարում էին նաև ազգային կուսակցությունները, այդ թվում ռամկավարները: Նրանք, հաղթահարելով գոյատևման խնդիրը, աստիճանաբար ձգտում էին վերականգնել նախկինում եղածները և ստեղծել կուսակցության նոր ակումբներ: Ռամկավարների հաջորդ տարիների գործունեության մասին կխոսենք հաջորդիվ:

Եզրակացություններ

1. Միրիայում ապրող հայությունը ևս ապրեց ցեղասպանության ու բռնի տարհանման սարսափները: Իսկ աշխարհամարտի ավարտից հետո, հավատալով Կիլիկիան զինագրավված ֆրանսիացիների խոստումներին, եղեռնից փրկված հայերը սկսեցին հարմարվել նոր պայմաններին և լծվեցին խաղաղ աշխատանքի:

2. Տարածաշրջանում բուռն գործունեություն ծավալեցին նաև հայ ավանդական կուսակցությունները, որոնք սակայն օր առօր հաղթանակի դափնիները վայելելու ակնկալիքով երբեմն միմյանց նկատմամբ անհանդուրժող կեցվածք էին որդեգրում: Իսկ ռամկավարներն ու Վերակազմյալ Հնչակյանները համագործակցում էին:

3. Կուսակցությունը խոշոր բնակավայրերում հիմնեց իր տեղական կառույց-ակումբները, որոնք զգալի կազմակերպչական գործունեություն ծավալեցին և ոչ միայն մահվան եզրին հասած ու հուսալքված հայությանը վերապրելու հավատ ներշնչեցին, այլև նպաստեցին հայարարական բարեկամության ամրապնդմանը և սատարեցին հանուն Միրիայի անկախության պայքարին:

Վկայակոչված աղբյուրներ և գրականություն

Արխիվներ

1. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 8ա-8բ:
2. ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 790, թ. 1, թթ. 2-6, գ. 807, թթ. 1-3:
3. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆ. 3, գ. 56, վ. 9:

Տպագիր սկզբնաղբյուրներ

4. ՌԱԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վաւերագրեր, Պէյրուք, 1988,
5. Ազգային պատուիրակության գործունեությունը 1915-1916 (Վաւերագրեր), Լիբանան, 2017:
6. Ռամկավար ազատական կուսակցության կազմաւորումն ու գործունեությունը 1915-1951 թթ., փաստաթղթերու ժողովածու, Ե., 2022: - 454 էջ:
7. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժող., Մ. Ներսիսյանի խմբ., Ե., 1991: Геноцид армян в османской империи, Е., 1996:
8. Հուշամատյան Մեծ եղեռնի 1915-1965, Բէյրուք, 1965:
9. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թրգմ. և ծնթգր Հ. Փափագյանի, Ե., 1988:
10. Հայոց 1915-1916 թթ ցեղասպանությունը, Մատենագիտություն, Ե. 1995 թ.:
11. Германские источники о геноциде армян. Период первой мировой войны", под ред. С. С. Степаняна. т. I, Е, 1991.
12. Русские источники о геноциде армян в османской империи 1915-1916 годы" (Сб. док. и мат.), вып. 1. Е, 1995.
13. **Toynbee A.**, Armenian Atrocities: The Murder of a Nation", L, 1915, Նույնի, The Murderous Tyranny of the Turks, N. Y., 1975.
14. **Davis L.**, The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide of 1915-1917", N. Y., 1989.
15. The Mandate for Syria and Lebanon, League of Nations Official Journal, August, 1922.

Գրականություն

16. **Անտոնյան Մ.**, Մեծ ոճիրը, Ե., 1990:
17. **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ զաղթավայրերի պատմության, հտ. 1-2, Ե., 1964-1967:
18. **Աբջամ Թ.**, Զուրթի Ու., «Ամոթայի արարք. Հայոց ցեղասպանությունը և թուրքական պատասխանատվության խնդիր», 2019, arar.sci.am>dlibra/publication/349401/edition/:
19. **Դալլաքյան Կ.**, ՌԱԿուսակցության պատմություն 1921-1940, գիրք առաջին, Ե., 1999:
20. **Դալլաքյան Կ.**, Արմենականություն և Մահմանադրականության հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, Թեզիսներ Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված գիտաժողովի, 12 մարտի 1996 թ, Ե., 1996:

21. **Թոփուզյան Հ.**, Միրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Ե., 1986: 372 էջ
22. **Թոփուզյան Հ.**, Հայերի մասնակցությունը Միրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին, Ե., 1968: 200 էջ:
23. **Կարապետյան Ռ.**, Միրիայի տեղն ու դերը արար-խորայելական հակամարտությունում (1946-2000), Կահիրե, 2008, 352 էջ:
24. 1915 թ. Հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր», հոդ ժող., Ե, 1995:
25. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, Ե., 1974, VI:
26. **Չոլաքեան Յ.**, 1978, Հայեպահայ պարբերական մամուլի համառոտ նկարագրություն (Քարեն Եփփե Ազգ. Ճեմարանի համանուն ցուցահանդեսին նիւթերը), Հայեպ, հրատարակություն Բ. Ե. Ճեմարանի ինստակալությամբ:
27. **Չոլաքյան Հ.**, Սուրիահայ դպրոցի պատմություն, հ. Ա, Ե., 2021, 648 էջ, հ. Բ, Ե. 2021: Հայեպի պարբերական մամուլի համառոտ նկարագրություն, Հայեպ, 1978:
28. **Սահակյան Ռ.**, Ցեղասպանության պատմությունից», Ե., 1990:
29. **Սահակյան Ռ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները, Ե., 1970:
30. **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009: - 244 էջ:
31. **Սարգսյան Ս.**, Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ., Ե., 2019:
32. **Սյուրմենյան Ա.**, Պատմություն Հայեպի հայոց, հ. 3, Փարիզ, 1950:
33. **Ճիզմենեան Մ.**, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, Ֆրեզնո, 1930, էջ 67:
34. **Ուինստոն Չերչիլ**, The World Crisis-1918-1928: The Aftermath, Նյու Յորք, 1929, էջ 428-433:
35. **Ֆիշենկենեան Ա.**, Սուրիոյ Հայ Համայնքի Պատմությունը 1946-1970թթ., Ե., 2018, 344 էջ:
36. Armenian Art Treasures of Jerusalem, Edited by Bezalel Narkiss, Manoda Press, 1979:
37. **Haddad, George**, Fivty Years of Modern Syria and Lebanon, pp. 41-43:
38. **Տեմիրճեան Եպիսկ. Վարդան**, Գալազանագիրք, Ա. մաս, Անթիլիաս, 1980: - 510 էջ:
39. **Барби А.**, В стране ужаса. Мученица Армения, пер. с фанц., Тифлис. 1919:
- 39.1. Британская помощь Армянам, II
- 39.2. Геноцид армян в османской империи. - Е., 1996
40. **Саркисян Е. К.**, Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Е., 1962:
41. **Киракосян Дж.**, Западная Армения в годы первой мировой войны. Е.. 1971:
42. **Lepsius J.**, Bericht Uber die Lage des Armenischen Votkes in der Turkei", Potsdam, 1916.
43. **Gibbons H. A.**, The Blackest Page of Modern History: Events in Armenia in 1915.
44. The Facts and Responsibilities, N. Y., 1916.
45. **Bryce J.**, The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16, Beirut, 1972;
46. **Morgenthau H.**, Ambassador Morgenthau's Story, N. Y., 1975.
47. **Ternon Y.**, Les Arme'niens Histoire d'un Ge'nocide, N. Y., 1981.
48. A Crime, of Silence the Armenian Genocide: Permanent Peoples Tribunal, ed. by G. Libaridian, L, 1985.
49. The Armenian Genocide in Perspective, ed. by R. Hovannisian. New Brunswick, 1986.

Հողվածներ

50. Հայերը Սուրիո և Լիբանանի մեջ, «Հայաստանի կոչնակ», 1948, թիվ 27 և 28:
51. Թուրքական ազգային ինքնությունը և Հայկական հարցը: «Գարուն», 1995, թիվ 1:
52. **Սարգսյան Ս.**, Ռամկավարների գործունեությունը Կիլիկիայում (1918—1920 թթ.) // «Էջմիածին» հանդես, թիվ 1, 2021, էջ 112-132:
53. **Սարգսյան Ս.**, Հանրի հերոսամարտը. պարտության պատճառները և պատասխանատվության հարցը: // ԼՀԳ, թիվ 2, 2022, էջ 34-47:

Մամուլ

54. Արև թերթ, 1931:
55. Կիլիկիա թերթ, 13 հոիլիսի 1919:
56. Փորձ, 1879, էջ 204-205:
57. Հառաջ, Փարիզ, 6 մայիսի, 1982:
58. Ternon Lves, Les Armeniens, Paris, 1977, p.171:
59. Սուրիահայ տարեցոյց, 1924, էջ 235:
60. http://www.sesonline.net/php/genel_sayfa.php?KartNo=54815:

Տճան/Հանձնվել է՝ 04.06.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 11.06.2024

Принята/Ընդունվել է՝ 18.06.2024